ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 54-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*01 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80/3 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 80/3 հասցեի 60.0քմ ներքին չափերով ավտոտնակը 72.4քմ սպասարկման հողամասով պատկանում է քաղ. Կարինե Խողիկյանին: Վերջինս ավտոտնակի վրա ինքնակամ կառուցել է բնակելի տուն՝ 274.7քմ ընդհանուր մակերեսով /արտաքին չափերով/: Բնակելի տան պատշգամբը ընկած է համայնքային սեփականության 23.0քմ հողամասի վրա: Ինքնակամ կառույցը և ինքնակամ զբաղեցրած հողամասը պետականորեն գրանցվել են ըստ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի օրենքի, նշված քաղաքացու անունով /սեփականության վկայական թիվ 2816575, տրված 11.08.2011թ./: Քաղաքացին դիմել է քաղաքապետին վերոգրյալը օրինականացնելու նպատակով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացնել նշված ինքնակամ կառույցը և օտարել ինքնակամ զբաղեցրած հողամասը քաղ. Կարինե Խողիկյանին, վերջինս դիտարկելով որպես բնակելի տան սպասարկման հողամաս:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետի և 4-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերը նշված ինքնակամ բնակելի տունը՝ 274.7քմ արտաքին չափերով, ճանաչել օրինական: Վերջինիս օրինականացման համար օրենքով նախատեսված վճարի չափը կազմում է 1400970 դրամ

2. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, վերոգրյալ 23.0քմ հողամասը օտարել քաղ. Կարինե Խողիկյանին՝ 44022 դրամ կադաստրային արժեքով:

3. Կառույցի զբաղեցրած 95.4քմ ընդհանուր մակերեսով հողամասը փոխադրել «Բնակավայրերի հողերի» բնակելի կառուցապատման հողերի կազմ:

4. Պարտավորեցնել քաղ. Կարինե Խողիկյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 44022 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 1400970 դրամ/ վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 55-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*02 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2006թ. հուլիսի 6-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Արմեն Լևոնի Գրիգորյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 500.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվում է 881.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Արմեն Գրիգորյանը ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 581.0.քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Վերոգրյալ 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 800.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության

2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 800.0քմ մակերեսով քաղ. Արմեն Լևոնի Գրիգորյանի /ծնված՝ 24.08.1986թ./ սեփականության իրավունքով:
2. Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 581.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Քաղ. Արմեն Գրիգորյանին պատկանող 800.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 25/2:
5. Պարտավորեցնել քաղ. Արմեն Գրիգորյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 56-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*02 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 168 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Շամախյան փողոցի վերջնահատվածում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի» 002-001 ծածկագրով հողում քաղ. Լևոն Վահանի Մարտիրոսյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 35.0քմ մակերեսով անասնագոմ /հաշվարկված է արտաքին չափերով/ և 1200.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Լևոն Վահանի Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Շամախյան փողոց թիվ 168:
2. Շամախյան փողոց թիվ 168 հասցեի ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*02 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3Ա/11 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ՎԱՐԴԱՆ ԹՈՒԽՏԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Վարդան Թուխտարյանը՝ Շամախյան փողոցի թիվ 3ա/11 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Շամախյան փողոցի թիվ 3ա/11 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի», մասնավորապես՝ այլ հողերի կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական թիվ 01032012-11-0025, հաստատված 2012թ.մարտի 1-ին/:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շամախյան փողոցի թիվ 3ա/11 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Վարդան Թուխտարյանին:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Շամախյան փողոցի թիվ 3ա/11 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Վարդան Թուխտարյանին:

2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամսյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Վարդան Թուխտարյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) Առևտրի տաղավարի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*06 մարտ 2012թ.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող մի շարք անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը, ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) և ժ) ենթակետերի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտերը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար.
-«Դիլիջան առողջարանային համալիր» բաց բաժնետիրական ընկերություն
-Վարանցով Մելյան անհատ ձեռնարկատեր
-Վազգեն Ֆրանգուլյան անհատ ձեռնարկատեր
-Սամվել Տեր-Կարապետյան անհատ ձեռնարկատեր
2.Ռաֆիկ Բաբինյան անհատ ձեռնարկատիրոջը տալ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվություն 01 հունվարի 2012թ.-31դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին.
տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*06 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. հունվարի 24-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 668-001 ծածկագրով հողամասի մի մասի /2248.0քմ հողամասի/ նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու մասին» թիվ 13 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. հունվարի 24-ի թիվ 13 որոշմանը կից տրամադրված հողամասի գլխավոր հատակագիծը համարել անվավեր:
2. Հաստատել Սարի փողոցի թիվ 21/1 հասցեի հողամասի փոփոխված գլխավոր հատակագիծը՝ 1856.0քմ մակերեսով:
3. Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. հունվարի 24-ի թիվ 13 որոշման մեջ կատարել փոփոխություն, որտեղ 2248.0քմ-ի փոխարեն կարդալ 1856.0քմ:
4. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունվարի 24-ի թիվ 13 որոշման 2-րդ կետում «այլ հողեր»-ի փոխարեն կարդալ «բնակելի կառուցապատման հողեր»:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ Սարի փողոցի թիվ 21/1 հասցեի հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն վերագրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 60-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*07 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 271-047 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 271-047 ծածկագրով հողամասի մի մասի՝ 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով «Բնակավայրերի հողերի» բազմաբնակարան շենքի սպասարկման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 271-047 ծածկագրով հողամասի մի մասին՝ 100.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ 26 Կոմիսարների փողոց թիվ 41/2:
2. Նշված 100.0քմ հողամասն ընդգրկել «Բնակավայրերի հողերի» բազմաբնակարան շենքի սպասարկման կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի հողերի կադաստրային քարտեզի 271-047 ծածկագրով հողամասի մի մասի՝ 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 61-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*07 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 274-040 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 274-040 ծածկագրով հողամասի մի մասի՝ 11.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 274-040 ծածկագրով հողամասի մի մասին՝ 11.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Մյասնիկյան փողոց թիվ 60/2:
2. Նշված 11.0քմ հողամասն ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 274-040 ծածկագրով հողամասի մի մասի՝ 11.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 62-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*07 մարտ 2012թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 51 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. դեկտեմբերի 27-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 51 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Սիրուն Հրանտի Մեյանը: Վերջինս դիմել է քաղաքապետարան նշված տնամերձ հողամասի սահմանների ճշտման և հողամասին կից, իր կողմից փաստացի ավել օգտագործվող հողամաս իրեն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ Այգեստան փողոցի թիվ 51 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 2424.0 քմ, որից 1940.0քմ հողամասի նկատմամբ քաղ. Սիրուն Մեյանն ունի սեփականության իրավունք: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ փաստացի ավել օգտագործվող 484.0քմ-ից 388.0քմ-ի (1940.0քմ X 20%) նկատմամբ ճանաչել քաղ. Սիրուն Մեյանի սեփականության իրավունքը, իսկ 96.0քմ (484.0քմ-388.0քմ) հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղաքացուն: Նշված տնամերձ հողամասում առկա է ինքնակամ կառուցված օժանդակ շինություն և ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ.

դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 51 հասցեի 1940.0քմ տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 484.0քմ հողամասից 388.0քմ  հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Սիրուն Մելյանի սեփականության իրավունքը, իսկ 96.0քմ հողամասն օտարել քաղաքացուն՝ ուղղակի վաճառքի ձևով: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 35770 դրամ:
2. Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը և ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Պարտավորեցնել քաղ. Սիրուն Մելյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի  արժեքը՝ 35770 դրամ /հաշվարկված է հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով/, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 63-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*12 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3Ա/12 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԱՆԱՆԻԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Անանիա Հակոբյանը՝ Շամախյան փողոցի թիվ 3ա/12 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Շամախյան փողոցի թիվ 3ա/12 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի», մասնավորապես՝ այլ հողերի կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական թիվ 28022012-11-0010, հաստատված 28.02.2012թ./:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շամախյան փողոցի թիվ 3ա/12 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Անանիա Հակոբյանին:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Շամախյան փողոցի թիվ 3ա/12 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Անանիա Հակոբյանին:

2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Անանիա Հակոբյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) Ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 64-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 մարտ 2012թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 800.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 24-ի թիվ 49 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 800.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու և մեկնարկային գինը սահմանելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով: Վերջինս հաստատվեց համայնքի ավագանու 2012թ. փետրվարի 28-ի թիվ 37 որոշմամբ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն թվականի մարտի 14-ից հայտարարել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 800.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթ՝ համաձայն կից աղյուսակի:
2. Մրցույթի օր նշանակել 2012 թվականի ապրիլի 13-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի մրցութային հանձնաժողովին հանձնարարել.
1) սահմանել կառուցապատման իրավունքի մրցույթի պայմանները,
2) հողամասի մրցութային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքը»,
3) նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Առդրույկ.

ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 24-ի թիվ 49 որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ՔԿ-12/ | Կալինինի 4-րդ նրբ. 9/4 | 0110-0095 | 800.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 50 տարի | 40000 դրամ | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 65-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2012թ. մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին նախապատրաստվելու համար Դիլիջանի քաղաքային համայնքում կազմավորել 10 ընտրական տեղամասային կենտրոններ.

| h/h | տեղամասի N | Տեղամասային կենտրոն | հասցեն |
|---|---|---|---|
| 1. | թիվ 1 | Թիվ 3 մանկապարտեզ | Մոլդովական 46 |
| 2. | թիվ 2 | Ակումբ | Շամախյան 27/1 |
| 3. | թիվ 3 | Թեյարան | Կալինինի 237ա |
| 4. | թիվ 4 | Արվեստի պետական քոլեջ | Կալինինի 57 |
| 5. | թիվ 5 | Թիվ 6 հիմնական դպրոց | Կամո 131 |
| 6. | թիվ 6 | Մշակույթի պալատ | Մյասնիկյան 53 |
| 7. | թիվ 7 | Թիվ 4 մանկապարտեզ | Օրջոնիկիձե 63/1 |
| 8. | թիվ 8 | Պետական քոլեջ | Ոիսանողական 70 |
| 9. | թիվ 9 | «Մանուշակ» կինոթատրոն | Շահումյան 12/1 |
| 10. | թիվ 10 | Թիվ 4 հիմնական դպրոց | Շահումյան 6 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 66-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր համաձայն կից աղյուսակի:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Առդիր

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի

2012 թվականի մարտի 13 թիվ 66-Ա որոշման

| h/h | հասցե | մակերես քառ. մ |
|---|---|---|
| 1. | Գետափնյա փող. թիվ 2 | 30 |
| 2. | Գետափնյա փող. թիվ 4 | 30 |
| 3. | Գետափնյա փող. թիվ 6 | 30 |
| 4. | Գետափնյա փող. թիվ 8 | 30 |
| 5. | Գետափնյա փող. թիվ 10 | 30 |
| 6. | Գետափնյա փող. թիվ 12 | 30 |
| 7. | Օրջոնիկիձե փող. թիվ 69 | 15 |
| 8. | Օրջոնիկիձե փող. թիվ 71 | 15 |
| 9. | Օրջոնիկիձե փող. թիվ 73 | 15 |
| 10. | Օրջոնիկիձե փող. թիվ 81 | 15 |
| 11. | Մոլդովական փող. թիվ 1 | 30 |
| 12. | Շամախյան փող. թիվ 1ա | 30 |
| 13. | Շամախյան փող. թիվ 1բ | 30 |
| 14. | Շամախյան փող. թիվ 2ա | 30 |
| 15. | Շամախյան փող. թիվ 2բ | 30 |
| 16. | Շամախյան փող. թիվ 3ա | 30 |
| 17. | Շամախյան փող. թիվ 3բ | 30 |
| 18. | Մյասնիկյան փող. թիվ 29 | 30 |
| 19. | Մյասնիկյան փող. թիվ 76 | 30 |

ՀՀ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _________ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 67-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Մարգո Բագրատի Քեռյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Կալինինի փողոցի թիվ 71 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի չափը 261.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 57.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Մարգո Քեռյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառույց, որը կառուցվել է մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Նշված 57.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոցի թիվ 71 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 318.0քմ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ 117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 71 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 318.0քմ մակերեսով, քաղ. Մարգո Բագրատի Քեռյանի /ծնված՝ 02.08.1937թ./ սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառույցը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Մարգո Քեռյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 68-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 մարտ 2012թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71/1 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. փետրվարի 16-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 71ա հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Մարգո Բագրատի Քեռյանը և Սամվել Նորիկի Քեռյանը: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 1208.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 1065.0քմ: Չափի փոփոխման հարցում սեփականատերերը առարկություն չունեն /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 71ա հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 1065.0քմ մակերեսով, քաղաքացիներ Մարգո Բագրատի Քեռյանի և Սամվել Նորիկի Քեռյանի սեփականության իրավունքով:

2. Կալինինի 71ա հասցեի 1065.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 71/1:
3. Պարտավորեցնել սեփականատերերին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 69-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 094-058 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 094-058 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 094-058 ծածկագրով հողամասի մի մասին՝ 20.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Բարեկամության փողոց թիվ 1/3:
2. Նշված 20.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 094-058 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 70-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ԿԱՌԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Շահումյան փողոցի թիվ 14 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 245-001 ծածկագրով հողում քաղ. Կառլեն Գալստյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 18.0քմ մակերեսով մառան /հաշվարկված է արտաքին չափերով/ և 18.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբեր 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Կառլեն Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 14/10:
2. Վերը նշված ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 71-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*16 մարտ 2012թ.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող մի շարք անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) և ժ) ենթակետերի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտերը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար

-«Զաքարյանի Հայք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
-Վաչագան Խառատյան անհատ ձեռնարկատեր
-Արթուր Դավթյան անհատ ձեռնարկատեր
-Սուրեն Հախվերդյան անհատ ձեռնարկատեր

-Սամվել Կոխլիկյան անհատ ձեռնարկատեր
-Արտակ Գրիգորյան անհատ ձեռնարկատեր

2.Ալբերտ Ղազարյան անհատ ձեռնարկատիրոջը տալ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների և հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն 01 հունվարի 2012թ.- 31դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնին. տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 72-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*16 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՊՈՒՃՈՒՐ ԴԻԼԻ» ՀԱՆԴԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 8000.0ՔՄ ԽՈՏՀԱՐՔԸ ՔԱՂ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Անահիտ Խաչատրյանը, Դիլիջանի «Պուճուր Դիլի» հանդամասի գյուղատնտեսական նշանակության հողերից 8000.0քմ հողամասը որպես խոտհարք օգտագործելու իրավունք ստանալու խնդրանքով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի «Պուճուր Դիլի» հանդամասի 8000.0քմ մակերեսով խոտհարքից 3 տարի ժամկետով օգտվելու իրավունք տրամադրել քաղ. Անահիտ Խաչատրյանին:
2. Խոտհարքից օգտվելու տարեկան վճարի չափը սահմանել 8000դրամ:
3. Քաղաքացու հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 73-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*16 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Սեյրան Արամայիսի Կոխլիկյանը՝ Շամախյան փողոցի թիվ 80 հասցեի իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը բաղկացած է երկու գույքային միավորներից՝ 205.0քմ և 605.0քմ մակերեսներով: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասը բաղկացած է 161.0քմ և 801.0քմ փաստացի չափերով հողամասերից: Հանձնաժողովը նշում է, որ նշված 801.0քմ մակերեսով հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվում է 196.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Սեյրան Կոխլիկյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան և օժանդակ շինության ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը:

Նշված 196.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Շամախյան փողոցի թիվ 80 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 962.0քմ /161.0քմ և 801.0քմ/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության

2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 80 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 962.0քմ ընդհանուր մակերեսով /161.0քմ և 801.0քմ/, քաղ. Սեյրան Արամայիսի Կոխլիկյանի /ծնված՝ 10.03.1953թ./ սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան և օժանդակ շինության ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Քաղ. Սեյրան Կոխլիկյանին պատկանող 801.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Շամախյան փողոց թիվ 80/1, 161.0քմ հողամասը թողնել նախկին՝ Շամախյան փողոց թիվ 80 հասցեով:
4. Պարտավորեցնել քաղ. Սեյրան Կոխլիկյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ          ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 74-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*20 մարտ 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 54/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Լուսինե Խաչատրյանը՝ իր սեփականությունը հանդիսացող, Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/1 հասցեի 355.0քմ հողամասից առանձնացվող 162.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Լուսինե Խաչատրյանին պատկանող, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/1 հասցեի 355.0քմ հողամասից առանձնացվող 162.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 54/2, մնացած 193.0քմ հողամասը թողնել նախկին՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 54/1 հասցեով:
2. Պարտավորեցնել քաղ. Լուսինե Խաչատրյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 75-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 մարտ 2012թ.*

### ՆԱՏԱԼՅԱ ԳՐԻԳՈՐԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ ԱՐՏԱԿ ՎՈՎԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Նատալյա Գրիգորի Ենգիբարյանը իր որդու՝ Արտակ Վովայի Կարապետյանի նկատմամբ խնամակալ նշանակելու խնդրանքով:Ուսումնասիրությունից պարզվել է, որ 1967թ. հունիսի 12-ին ծնված՝ Արտակ Վովայի Կարապետյանը Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. դեկտեմբերի 21-ի վճռով ճանաչվել է անգործունակ:

Հաշվի առնելով, որ Նատալյա Գրիգորի Ենգիբարյանը չափահաս գործունակ է, բարոյական և անձնական այլ հատկանիշները բնութագրվում են դրական և նա հանդիսանում է Արտակ Վովայի Կարապետյանի մայրը, իսկ նրա խնամքի տակ գտնվող Արտակ Վովայի Կարապետյանը խնամակալության կարիք ունի, Դիլիջանի քաղաքային համայնքի խնամակալության հոգաբարձության հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34,36,37 և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի $2^1$ մասի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Նատալյա Գրիգորի Ենգիբարյանին նշանակել իր որդու՝ 1967թ. հունիսի 12-ին ծնված Արտակ Վովայի Կարապետյանի նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 76-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*22 մարտ 2012թ.*

# ՔԱՂ. ԱՐՏԱՎԱԶԴ ՄԵԼՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 272/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Արտավազդ Արկադիի Մելյանը՝ Կալինինի փողոցի թիվ 272ա հասցեում իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինին փողոցի թիվ 272ա հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում քաղ. Արտավազդ Մելյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 892.0քմ հողամաս, որից 400.0քմ-ի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով, մնացած 492.0քմ հողամասը համայնքային սեփականություն է /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Արտավզադ Արկադիի Մելյանի կողմից, Կալինինի փողոցի թիվ 272ա հասցեում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 272/1:

2. Կալինինի փողոցի թիվ 272/1 հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Արտավազդ Արկադիի Մելյանի /ծնված 26.07.1954թ./ սեփականությունը:
3. Վերը նշված 492.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հողեր», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
4. Պարտավորեցնել քաղ. Արտավազդ Մելյանին.
1) Նշված տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2012թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 77-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*22 մարտ 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. հունվարի 30-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Կալինինի փողոցի 3-րդ նրբ. թիվ 8 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Հայկանուշ Սերգեյի Չոբանյանը և Սամվել Արամայիսի Ղուլյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 690.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվում է 720.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացիները ձեռք են բերում սեփականության իրավունք: Վերջինիս վերաբերյալ առկա է համասեփականատերերի համաձայնությունը: Մնացած 420.0.քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Վերոգրյալ 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոցի 3-րդ նրբ. թիվ 8 հասցեի բնակելի տան սպասարկման

հողամասի չափը կազմում է 990.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի 3-րդ նրբ թիվ 8 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 990.0քմ մակերեսով քաղաքացիներ Հայկանուշ Սերգեյի Չոբանյանի /ծնված՝ 00.00.1930թ./ և Սամվել Արամայիսի Ղուլյանի /ծնված՝ 17.01.1966թ./ սեփականության իրավունքով:
2. Կալինինի փողոցի 3-րդ նրբ. թիվ 8 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 420.0քմ հողամասը և վերջինումս առկա ինքնակամ կառուցված 14.6քմ մակերեսով օժանդակ շինությունը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել համասեփականատերերին.
1) Իրենց տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*23 մարտ 2012թ.*

## ՇՈՂԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԻՆԱԿԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԵՎ ՇՈՂԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Շողիկ Արմենակի Պապիկյանը հայտնելով, որ իր թոռների՝ Հարություն Վաղինակի Պապիկյանի և Շողիկ Վաղինակի Պապիկյանի խնամքն ու դաստիարակությունը ամբողջովին ինքն է իրականացնում:Քաղաքացին խնդրել է իրեն նշանակել 1996թ.սեպտեմբերի 25-ին ծնված Հարություն Վաղինակի Պապիկյանի և 1997թ.սեպտեմբերի 16-ին ծնված Շողիկ Վաղինակի Պապիկյանի նկատմամբ հոգաբարձու:Ուսումնասիրությունից պարզվել է, որ երեխաները միակողմանի ծնողազուրկ են իսկ մայրը ընտանեկան անախորժություններից ելնելով տնից հեռացել է:

Հաշվի առնելով երեխաների կարծիքը այն մասին, որ ցանկություն են հայտնել մնալ տատիկի խնամքի ներքո և այն ,որ Շողիկ Արմենակի Պապիկյանը չափահաս գործունակ է, ծնողական իրավունքներից զրկված չէ, բարոյական և անձնական այլ հատկանիշները բնութագրվում են դրական և հանդիսանում է երեխաների հարազատ տատը, իսկ նրա խնամքի տակ գտնվող անչափահասները հոգաբարձության կարիք ունեն, Դիլիջանի քաղաքային համայնքի խնամակալության, հոգաբարձության և անչափահասների գործերով հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 35, 36, 37, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 44, 134, 135, հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի $2^1$ մասի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Շողիկ Արմենակի Պապիկյանին նշանակել 1996թ.սեպտեմբերի 25-ին ծնված Հարություն Վաղինակի Պապիկյանի և1997թ.սեպտեմբերի 16-ին ծնված Շողիկ Վաղինակի Պապիկյանի նկատմամբ հոգաբարձու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 79-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*23 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 78/3 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ, 2010Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2010թ. օգոստոսի 17-ի թիվ 719 որոշման համաձայն Գետափնյա փողոցի թիվ 78/3 հասցեի հողամասը, վարսավիրանոց կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով օգտագործման է տրամադրվել Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 86շ. բն. 12 հասցեի բնակիչ քաղ. Գնել Քեռյանին: Վերջինիս հետ 2010թ. օգոստոսի 30-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր: Քաղաքապետարան է դիմել քաղ. Գնել Քեռյանը՝ հրաժարվելով նշված հողամասի հետագա օգտագործումից:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 101 հոդվածի համապատասխան պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետարանի և Գնել Քեռյանի միջև 2010թ. օգոստոսի 30-ին կնքված պայմանագիրը լուծել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 80-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*23 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 242-043 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 242-043 ծածկագրով հողամասի մի մասի՝ 30.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի ընդհանուր օգտագործման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 242-043 ծածկագրով հողամասի մի մասին՝ 30.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 8/1:
2. Նշված 30.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի ընդհանուր օգտագործման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 242-043 ծածկագրով հողամասի մի մասի՝ 30.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 81-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*24 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. մարտի 16-ի սեփականության իրավունքի վկայագրի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի 26 Կոմիսարների փողոցի թիվ 1 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Նինա Մակարյանը և Վահագն Մամիկոնի Մակարյանը: Վերջիններս դիմել են քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 730.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվում է 701.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացիները ձեռք են բերում սեփականության իրավունք: Վերջինիս վերաբերյալ առկա է համասեփականատերերի համաձայնությունը: Մնացած 401.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Վերոգրյալ 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, 26 Կոմիսարների փողոցի թիվ 1 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 1030.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի 26 Կոմիսարների փողոցի թիվ 1 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1030.0քմ մակերեսով քաղաքացիներ Նինա Մակարյանի /ծնված՝ 25.11.1931թ./ և Վահագն Մամիկոնի Մակարյանի /ծնված՝ 01.11.1955թ./ սեփականության իրավունքով:

2. 26 Կոմիսարների փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 401.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում, որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:

3. Պարտավորեցնել համասեփականատերերին.

1) Իրենց տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 82-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող մի շարք անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտերը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
-«Գրիգ Պա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
-Աղաջանյան Լյուբա անհատ ձեռնարկատեր
-Նազանյան Թելման
անհատձեռնարկատեր
Պետրոսյան Անահիտ անհատ ձեռնարկատեր
-Օղաբաշյան Աշոտ անհատ ձեռնարկատեր
-Թամամյան Գայանե անհատ ձեռնարկատեր
2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին.
տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 83-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

## ՔԱՂ. ՌՈՒԲԵՆ ԱՆԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 21-ի թիվ 45 որոշմամբ 2012թ. մարտի 23-ին կրկնաճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 861.0քմ հողամաս /Լոռ-98(ՔՀ-09), Տիգրան Պետրոսյան փողոց 2-րդ նրբ. թիվ 21 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 2152500 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2583000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 27 հասցեի բնակիչ Ռուբեն Անանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 5 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Տիգրան Պետրոսյան փողոց 2-րդ նրբ. թիվ 21 հասցեի 861.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 27 հասցեի բնակիչ Ռուբեն Անանյանին:

2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Ռուբեն Անանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2583000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 107625 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 84-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

## ՔԱՂ. ԱՐՍԵՆ ՍԻԼԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 21-ի թիվ 45 որոշմամբ 2012թ. մարտի 23-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 997.0քմ հողամաս /Լոտ-1(ՔՀ-12), Կալինինի փողոց IV նրբ. թիվ 49/2 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 2492500 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2991000 դրամ առավելագույն գնով հաղթեց Երևանի Օզանովի փողոց 1շ. բն. 5 հասցեի բնակիչ Արսեն Սիլանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Կալինինի փողոց IV նրբ. թիվ 49/2 հասցեի 997.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Երևանի Օզանովի փողոց 1շ. բն. 5 հասցեի բնակիչ Արսեն Սիլանյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ

պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Արսեն Միլանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2991000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 124625 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 85-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

## ՔԱՂ. ՎԱՐԴԱՆ ԱԼԻԽԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 21-ի թիվ 45 որոշմամբ 2012թ. մարտի 23-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 200.0քմ հողամաս /Լոտ-2(ՔՀ-12), Մոլդովական փողոց թիվ 15/1 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 500000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 600000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Շամախյան փողոց թիվ 56 հասցեի բնակիչ Վարդան Ալիխանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 2 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Մոլդովական փողոց թիվ 15/1 հասցեի 200.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Շամախյան փողոց թիվ 56 հասցեի բնակիչ Վարդան Ալիխանյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ

պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Վարդան Ալիխանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 600000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 25000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 86-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

## ՔԱՂ. ՄԱՅԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 21-ի թիվ 45 որոշմամբ 2012թ. մարտի 23-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 500.0քմ հողամաս /Լոտ-5(ՔՀ-12), Սարալանջի փողոց 1-ին նրբ. թիվ 14 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 1250000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 1500000 դրամ առավելագույն գնով հաղթեց Չարենցավանի 2-րդ թաղ. 1շ. բն. 39 հասցեի բնակիչ Մայիս Մանուկյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 3 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Սարալանջի փողոց 1-ին նրբ. թիվ 14 հասցեի 500.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Չարենցավանի 2-րդ թաղ. 1շ. բն. 39 հասցեի բնակիչ Մայիս Մանուկյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ

պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Մայիս Մանուկյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 1500000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 62500 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 87-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

# ՔԱՂ. ՅՈՒՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 21-ի թիվ 45 որոշմամբ 2012թ. մարտի 23-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 874.0քմ հողամաս /Լոտ-6(ՔՀ-12), Սարալանջի փողոց 6-րդ նրբ. թիվ 4 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 2185000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2622000 դրամ առավելագույն գնով հաղթեց Էջմիածնի Աբովյան փողոց թիվ 25ա հասցեի բնակիչ Յուրիկ Ղազարյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 4 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Սարալանջի փողոց 6-րդ նրբ. թիվ 4 հասցեի 874.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Էջմիածնի Աբովյան փողոց թիվ 25ա հասցեի բնակիչ Յուրիկ Ղազարյանին:

2. Կնքել հողի աճուրդի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Յուրիկ Ղազարյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2622000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 109250 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 88-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 մարտ 2012թ.*

### ՎԻԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Գետափնյա փողոցի թիվ 76շ թիվ 2 բնակարանի բնակիչ Վ. Աբրահամյանը, հայտնելով, որ կորցրել է վերոհիշյալ բնակարանի համար իրենց տրամադրած միասնական օրդերը, իսկ ընտանիքում տեղի է ունեցել փոփոխություններ. հայրը և մայրը մահացել են, իսկ ինքը փաստացի բնակվում է եղբոր, կնոջ և երեք աղջիկների հետ: Այժմ նա խնդրում է իր ընտանիքին հատկացնել նոր օրդեր:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված բնակարանը հատկացված է եղել Աղաբեկ Աբրահամյանի ընտանիքին: Նա մահացել է 1998թ.-ին, իսկ կինը՝ Սեդա Աբրահամյանը՝ 2011թ.-ին: Այժմ բնակարանում փաստացի բնակվում են Վ. Աբրահամյանը, եղբայրը, կինը և երեք երեխաները: Բնակարանում հաշվառված է նաև Վ. Աբրահամյանի մյուս աղջիկը՝ Մարիամ Վիգենի Աբրահամյանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով բնակարանային հարցերի հանձնաժողովի առաջարկությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Անվավեր ճանաչել Գետափնյա փողոցի թիվ 76 շենքի թիվ 2, երկու սենյականոց բնակարանի համար քաղ. Աղաբեկ Աբրահամյանին հատկացված բնակարանի օրդերը:
2. Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի թիվ 76 շենքի, թիվ 2, երկու սենյականոց բնակարանի վարձակալ ճանաչել Վիլեն Աղաբեկի Աբրահամյանին և նրա անվամբ դուրս գրել միասնական օրդեր՝ 7 անձի համար (ինքը, եղբայրը, կինը, չորս աղջիկները):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 89-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*27 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 094-059 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 094-059 ծածկագրով հողամասի մի մասի՝ 24.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 094-059 ծածկագրով հողամասի մի մասին՝ 24.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Բարեկամության փողոց թիվ 1/4:
2. Նշված 24.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 094-059 ծածկագրով հողամասի մի մասի՝ 24.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 90-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*27 մարտ 2012թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Վազգեն Ղազարի Ֆրանգուլյանը՝ Առաջին փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 489.0քմ:
Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 93.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (489.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցում և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Առաջին փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 93.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Վազգեն Ղազարի Ֆրանգուլյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Առաջին փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 582.0քմ /489.0քմ+93.0քմ/մինչև 20%/:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումը և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Վազգեն Ֆրանգուլյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 91-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*27 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Էմմա Վազգենի Ֆրանգուլյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Առաջին փողոցի թիվ 4ա հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 250.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 85.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Էմմա Ֆրազուլյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառույց, որը կառուցվել է մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 85.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Առաջին փողոցի թիվ 4ա հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 335.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Առաջին փողոցի թիվ 4ա հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 335.0քմ մակերեսով, քաղ. Էմմա Վազգենի Ֆրանգուլյանի /ծնված՝ 11.10.1958թ./ սեփականության իրավունքով:
2. Առաջին փողոցի թիվ 4ա հասցեի 335.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Առաջին փողոց թիվ 4/1:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառույցը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել քաղ. Էմմա Ֆրանգուլյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*27 մարտ 2012թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 227-068 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 227-068 ծածկագրով հողամասի մի մասի՝ 36.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 227-068 ծածկագրով հողամասի մի մասին՝ 36.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Մյասնիկյան փողոց թիվ 117/4:
2. Նշված 36.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր

պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 227-068 ծածկագրով հողամասի մի մասի՝ 36.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 93-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*27 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 11/Թ-35 ՇԻՆԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի քաղաքապետի կողմից 2011 թվականի նոյեմբերի 16-ին տրված թիվ 11/Թ-35 շինթույլտվությունով Վասիլև փողոցի թիվ 48 և թիվ 48/2 հասցեներում թույլատրվել էր քաղ. Կարեն Մարտիրոսյանին կառուցել բնակելի տուն՝ մանսարդային հարկով և օժանդակ շինություններով: Քաղաքացին դիմել է քաղաքապետարան նախատեսված երկհարկանի բնակելի տան փոխարեն մեկհարկանի բնակելի տուն կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով, որի համար ներկայացվել են նոր նախագծային փաստաթղթեր: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին չեղյալ համարել տրամադրված շինթույլտվությունը և տրամադրել նոր շինթույլտվություն օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 - րդ հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 2011թ. նոյեմբերի 16-ի թիվ 11/Թ-35 շինթույլտվությունը համարել չեղյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 94-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*28 մարտ 2012թ.*

### ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. փետրվարի 21-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Դիլիջանի Հակոբջանյան փողոցի 1-ին նրբ. թիվ 2 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Մարտիկ Սողոյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 358.0քմ:
Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 341.0քմ: Չափի փոփոխման հարցում քաղ. Մարտիկ Սողոյանը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է ինքնակամ կառուցված օժանդակ շինություն և ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Հակոբջանյան փողոցի 1-ին նրբ. թիվ 2 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 341.0քմ մակերեսով, քաղ. Մարտիկ Սողոյանի սեփականության իրավունքով:

2. Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը և ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:

3. Պարտավորեցնել Մ.Սողոյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 95-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*28 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի 3 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2012թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:
Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեով նախատեսված առաջին եռամսյակի եկամուտներից կատարել տեղաշարժ երկրորդ եռամսյակ
1) Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար – 1700000դրամ
2) Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ – 500000 դրամ
3) Անշարժ գույքի հաշվառման համար տեղական վճար –800000դրամ
4) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ – 750000 դրամ
5) Այլ եկամուտներ -300000դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված առաջին եռամսյակի ծախսերի նախահաշիվներից կատարել տեղաշարժ երկրորդ եռամսյակ
1) «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/ 4111հոդված – 2670000դրամ, 4131 հոդված – 670000 դրամ,
2) « Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ»/բաժին 08 խումբ 02 դաս 03/ 4511 հոդված – 1460000 դրամ
3. Դիլիջան քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված երկրորդ եռամսյակի ծախսերի նախահաշիվներից կատարել տեղաշարժ առաջին եռամսյակ
1)«Թանգարաններ, ցուցասրահներ»/բաժին 08 խումբ 02 դաս 02/ 4511 հոդված – 750000 դրամ
4. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 96-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*30 մարտ 2012թ.*

## ՔԱՂ. ՄԱՐՈՒՍՅԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻ - ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Մարուսյա Հմայակի Նալբանդյանը՝ Շամախյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում, իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում քաղ. Մարուսյա Նալբանդյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 755.0քմ հողամաս,՝որից 400.0քմ-ի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով, մնացած 355.0քմ հողամասը համայնքային սեփականություն է /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Մարուսյա Հմայակի Նալբանդյանի կողմից, Շամախյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Շամախյան փողոց թիվ 2/2:
2. Շամախյան փողոցի թիվ 2/2 հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Մարուսյա Հմայակի Նալբանդյանի /ծնված 28.09.1939թ./ սեփականությունը:
3. Վերը նշված 355.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հողեր», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
4. Պարտավորեցնել քաղ. Մարուսյա Նալբանդյանին.
1) Նշված տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական ուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97-Ա

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*30 մարտ 2012թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 80 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. մարտի 12-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. թիվ 80 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Մանվել Ասքանազի Կարոյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 600.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 999.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Մանվել Կարոյանը ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 699.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. թիվ 80 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 900.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի

64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. թիվ 80 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 900.0քմ մակերեսով, քաղ. Մանվել Ասքանազի Կարոյանի /ծնված՝ 10.01.1966թ./ սեփականության իրավունքով:
2. Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. թիվ 80 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 699.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել Մանվել Կարոյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 98-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*30 մարտ 2012թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 245-014 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 245-014 ծածկագրով հողամասի մի մասի՝ 108.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 245-014 ծածկագրով հողամասի մի մասին՝ 108.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 34/1:
2. Նշված 108.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 245-014 ծածկագրով հողամասի մի մասի՝ 108.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

79.0674

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 99-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*30 մարտ 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 139-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 139-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 38.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 139-001 ծածկագրով հողամասի մի մասին՝ 38.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 78/4:
2. Նշված 38.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 139-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 38.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 100-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*30 մարտ 2012թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ /ՍՈՎԵՏՆԵՐԻ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 46 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Կարապետ Ստեփանյանը՝ Խորհուրդների /նախկինում Սովետների/ փողոցի թիվ 46 հասցեի իր բնակելի տան տնամերձ հողամասի սահմանները ճշտելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը օրինական չափը կազմում է 600.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 600.0քմ, որտեղ առկա են բնակելի տան և մառանի ինքնակամ կատարված կցակառուցումներ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված բնակելի տան և մառանի ինքնակամ կցակառուցումների շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Խորհուրդների փողոցի /նախկինում Սովետների/ թիվ 46 հասցեի 600.0քմ մակերեսով տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ քաղ. Կարապետ Ստեփանյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան և մառանի ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:

3. Պարտավորեցնել քաղ. Կարապետ Ստեփանյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ